



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



Ազգային Պատրիարքական  
ԿԱՇՏՈՒՄՆԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Պատրիարքական

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՔՈՂՈՎՈՅ

ԳԱՅՈՒՄ 1884 ԱՄՐ

ՆԻՍ Ժ.

31 ՕԴ-ԱՄՐ 1884



Կ. ՊՈՒՏՈ

1884

# ԴԻՒՅՆԻՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԱՅ

## ՄԱՅՐ ԳԻՒԹԱՆ

Տիգրան	Լիքէնտի	Եռւսուփեան	Ա.	Աղենողեա
Տրիպոսոտուր	»	Գաղարոսեան	Բ.	»
Յովչաննէս	»	Թորոսեան	Գ.	»
Յովչաննէս	»	Արշակունի	Ա.	Աղենողեա
Յակոբ	»	Պօշնակեան	Բ.	»
Ստեփան	»	Տամատեան	Գ.	»

Հեռնասուրեան Գիւան

Մատթէոս Եսու. Խլմիլլան Աղենողեա  
Գարեգին Վրդ. Թալթարեան  
Մարգոս Լիքէնտի Աղարէջեանց

Դաստիարակուրեան Գիւան

Անէթէսս Լի. Պէրպէջեան Աղենողեա  
Գէորգ. » Ապոստոլահ  
Միքայէլ. » Մամիկոնեան

Կալուածոց Գիւան

Քրիստոս. Լի. Ղաղարոսեան Աղենողեա  
Յակոբ. » Եէմէնիճեան  
Պօղոս. » Թորոտոմեան

Համարակարեան Գիւան

Կարապետ Լի. Սըլվաճեան Աղենողեա  
Մկրտիչ. » Ճանրանեան  
Գառնիկ. » Յովլակիմեան

Ցարաբերուրեան Գիւան

Յովչաննէս. Լի. Թորոսունան Աղենողեա  
Ռուբէն. » Պաւէկուրեան  
Վլչէն. » Օրմանեան

Իրաւասուրեան Գիւան

Ցովչաննէս. Քէյ. Մկրտչան  
Յակոբ. Լիքէնտի Արշակ  
Գարըրիէլ. » Նորատունիեան

Կալուածունուրեան Գիւան

Մինաս. Լիքէնտի Զերադ. Աղենողեա  
Յովչաննէս. » Արշակունի  
Եշան. » Պօյտճեան

Խմբագրուրեան Գիւան

Հարաբէռձում. Լիքէնտի Ալաճաճեան  
Յուկոբ. » Գուրգէն  
Կարապետ. » Խթիճեան

# ԱԶԳԱՅՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲՈՅՈՒՄՆ 1884 ԱՄԵ

ՆԻՍ Փ.

31 ՕԳՈՍՏՈՍ 1884

ՆԱԽԱԴԱՀ. — Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ (Առաջապետ),  
ԱՏԵՆԱՊԵՏ. — Քրիստոնութ Էֆէնտի Ղաղարոսեան (Բ. Առաջապետ)

## ՕՐԱԿԱՐԳ

Ա. — Ատենական գործողութիւնք .

Բ. — Շարունակութիւն վիճաբանութեան ի վերայ Առաջնորդական խնդրոյ .

Գ. — Խնդիր երեսփոխանութեան Թաղէոս Էֆէնտի Պէկեանի .

Առաջին Ատենապետ Տիգրան Էֆէնտի  
Եռուութեան անձնական տկարութեան պատ-  
ճառաւ իւր բացակայութիւնն գրաւորապէս  
ծանուցած մինելով Դիւանին , Բ. Ատենապետ  
Ղազարոսեան Քրիստոնութ Էֆէնտի ատենա-  
կը կը բանաց ժամն 3 ին , 'ի ներկայութեան  
27 Երեսփոխանաց , որոց թիւն ի վերջէ կը  
յանդի 52 ի :

## ՕՐԱԿԱՐԳ

Ա.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈԹԻՒՒՆՔ

4.

Բացակայութիւնք

Երեսփոխաններէն՝

Տ. Գրիգոր Պէյ . Աճմեան

Ախմօն Պէյ Մաքսուտեան  
Գասպար Էֆէնտի Չերազ  
Դարրիէլ " Նորատունկեան  
Գրիգոր " Պէրպէրեան  
Խորէն " Պուլկուրեան

անձնական տկարութեամբ ժողովոյ այսօրեայ  
Խիստէն բացակայ մաննին դրով հաղորդած  
մինելով Դիւանին , Ատենապետ Էֆէնտի , իր-  
եւ օրինաւոր բացակայք , արձանագրել կու-  
տայ նոյց անուանքն ի տումարի ներկայու-  
թեան :

2.

Վաւերացումն Ը. Է. Թ. Ելստերու  
Ատենագրութեանց .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ժողովոյ ընդունե-

լոթեան պիտի ենթարկեմ նախորդու երկու նիստերու ատենագրութիւններն :

Ուստի կը հրաւիրեմ զերեսփոխանանախ յայտնել իրեանց դատողութիւնը ութրորդ նստի ատենագրութեան վրայ :

**ՅՈՊԱՆԵԱՆ Մ. ԷՅ.** — Այդ նատի ատենագրութեան մէջ կան այնպիսի կէտեր որք դիտողութեան կարօտ են, բայց ըստ որում ներկայ չ'է ես նոյն նատին, ուստի դիտողութիւն ընելու իրաւոնք չունիմ սակայն կուզեմ որ այս խօսքերս արձանագրուեին :

**ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՅ.** — Աւթրորդ նըստի ատենագրութեան վաւերացմանն առթիւ, խօսք կուզեմ անձնական դէպքի մը համար :

(Ումանք յերեսփոխանաց դիտել կուտանք քէ՝ այս տեսակ պարագայի մէջ խօսք տալ երեսփոխանի մը՝ օրինական ՞՛կ) :

**ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՅ.** — Երբ ես ներկայ չ'է և իմ անձիս դէմ ակնարկութիւններ եղած են, Դիւանն կամ պարտաւոր էր լոեցնել տալ զանոնք և կամ խօսք տալու է ինձ այժմ:

**ԶԵՐԱԶ Մ. ԷՅ.** — (Առ. Ալիքսանեան հանուի) Թո՞ղ բացակայ չի մնացիք, որպէս զի վայելէիք Զեր պատասխանելու իրաւունքը :

**ՅՈՊԱՆԵԱՆ Մ. ԷՅ.** — Եթէ Ալիքսանեան էֆէնտի որ բացակայ էր, թոյլ տրուի խօսիւ, յայնժամ ես ալ պիտի խօսիմ :

**ԱՏԵՆԱՊԵՏԻ ԷՅ.** — Եեր ներքին կանոնագիրն կը թշուատքէ երեսփոխանի մը ու է ժամանակ խօսք առնուլ անձնական դէպքի մը համար : Ուստի Դիւանն պատրաստ է խօսք տալ Ալիքսանեան էֆէնտի, յետ վաւերացման ատենագրութեան :

**ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՅ.** — Քանի որ խօստա-

ցաք զիս լսել, Ատենասիւտ էֆէնտի, կ'սուառեմ սիրով :

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ.** — Երես 240, սիւնակ Ա. Տնտեսու Խորհրդոյ անդամ Կամապահական Խ. էֆէնտի այս յայտարարութիւններն, որովք կը հաստատէր թէ Պատրիարքարանի մէջ թերաւթիւնը և շատութիւնը գործուածեն, աւելորդ պաշտօնեաններ պահէկով ևսյն, շատ յապաւեալ կը գտնեմ՝ ատենագրութեան մէջ : Այդ պաշտօնական յայտարարութիւններըն, որոնց հետքն հազիր կ'երեւի ատենագրութեան մէջ, իմ այդ մասին ըրած դիտութիւններս հաստատեցին : Ուստի կը գործամանամ որ Պատրիարքարանի մէջ գործուած զեղծմունք այդքանի կ'սրբագրուեին, և Կամապահական էֆէնտի ալ այժմ՝ զիտութիւն չըներ և իր խօսք ամրողաւթիւնը չպաշտպաներ : Երես 210-241, Զերազ Մ. էֆէնտի և իմ մէջ անցած մասնաւոր բանակուի մը ատենագրութեան մէջ արձանագրեալ կը գտնեմ, և այն սիրալ կերպով : Երբ Զերազ էֆէնտի հարցուց ինձ թէ, Խրիմեանը չթողուց : — Ես պատասխանեցի թէ, սո՞ւ, ան ալ թշնամութիւնը ըրաւ : Ատենագրութեան մէջ, զաւառական դաստիարակութեան բշանակի է դրուած է, սիրալ է բալորովին : զաւառական բառն հօս տեղ չունի, զի խնդիրը Պօլսոյ մէջ Կեդրոնական Վարդարանի մը բացման վրայ էր, ինչպէս Զերազ էֆէնտի յառաջադյոյն հարցումն խօս կ'երեւի :

Երես 241, սիւնակ Բ. առաջին խօսքս պիտի ըլլայ սա պէս : « Քանի անդամ որ արգը Պատրիարքարանի պարտքը վճարեց, անդ գտնուող պաշտօնեացը դիւրաւթիւն ունեցան նորէն շապութիւններ ՚ի գործ զնել և պարտք գոյացնել, ուստի աւելի լաւ կ'ըլլայ պահէկ արգի պարտքը, որովէսպի միշտ

հոդ տարուի անդ խնայողութիւններ ՚ի գործ դնել, ինչպէս այժմ՝ կը ըլլայ » : Այս խօսքին ի պատասխան եղր Կամսարական էֆէնտի հարցուց ինձ թէ, « դուք ի՞նչ տուած էք » : Ես ալ միւնոյն հարցումն իրեն ուզգեցի թէ, « դուք ի՞նչ տուած էք » : — Նոյն սիւնակին մէջ երբորդ խօսք պիտի ըլլայ սասակս . « ի՞նչ ըսել է . Դուք ինդիր կ'ընէք երեափոխանաց անվճար թուուցած տրոց մասը, որ աննշան գումար մը կը կազմէ, ի՞նչ պատճառու չ'էք կրնար մոնել Մնակեան ժառանգութեան 5000 ոսկու մօտ ահազին գումարի մը բացարքութեան ինդրոյն, որ արդէն երեափոխանական ժողովին կողմէն Վարչութեան յանձնուած է ի բննութիւն և ի տեղեւ կագործութիւն » :

Երես 214, սիւնակ Ա. Կամսարական էֆէնտի սա խօսքը, « Ես յ'անուն Վարչութեան չ'եմ խօսիր » պիտի ըլլայ « Ես յ'անուն Վարչութեան չ'եմ կրնար խօսիր այդ խնդրոյն ( Մնակեան ժառանգութեան ) վըրայ ո, և կրնաք այդ մասին և այլն :

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. — Էջ 203, սիւնակ Բ. տող 30 . պատասխանեցի Ենթիշմամբ. « Համարակարութեան Դիւանն եղաւ նախայարձական » :

Էջ 204, սիւնակ Բ. տող 39 . պիտի ի յարել . եթէ Պատրիարքարանը դրամ ունեցած ըլլար, այսօր 4,000 ոսկի սարտը չը պիտի ունենար :

Կը վերջանեմ, յարելով թէ Փափառդեան էֆէնտի իրաւունք չ'ունի զաւուական բառ ու զեղչել իմ խօսքերէս, որոյ տէրը ես եմ կարծեմ :

Տ. Խ. ԱՐՔԵՊԻՇԿ. ՆԱՐ-ՊԵՏ. — Յգուստով 3 ի նոտին մէջ Կամսարական էֆէնտի իմ բացահայութեան խօսած է կրօնական բառ ու զեղչել իմ խօսքերէս, որոյ տէրը ես եմ կարծեմ :

Կամսարական էֆէնտի սխալ ատենազըլլարութեան մը վրայ կը հիմնէ խր դիտողութիւններն : Այս յիշք թէ Եր նատի ատենազըլլարութեան պահուն, այն ինչ կը մանէի ի սըրաւ ժագովկայ ընդունեցաց ատենազըլլարութիւնն ա զարմանք յացնեցի թէ ի՞նչպէս կը լայ որ այդքան կարեւոր նատի մը մէջ իմ ատենազըլլարութիւնն մի անգամ ցոյց տրուած չ'է ինձ տպուելէ ասած : — Կամսարական էֆէնտի իր մէկ դիտողութիւնն հիմնած է սա խօսքին վրայ, զօր իրը թէ ես ըսած լինիմ « Պատրիարքարանի պաշտօնեալը 4,500—2,000 զըլ ամսական կ'անունն » : Ես սցդ սեսակ խօսք չ'եմ ըսած, այլ Տնտեսական խորհրդոյ Հաշուեցցցն ի ձեռին, այս բեմին ցոյց տափ Պատրիարքարանի պաշտօնէից ամսականաց համեմատութիւնն : Առաջին սխալն այս է, հաշուեական սխալ մը՝ որ ապա իրը փաստ կը գործածուի ինձ դէմ :

Կամսարական էֆէնտի դիտողութիւնը ըստ է նաեւ սա խօսքին դէմ զըլ զօր իրը թէ ես յինքենէ ըսած լինիմ . — « Պատրիարքարանի մէջ կան պաշտօնեաններ որք Սնտուկին պարտը ունին » : Բայց ինքնաշնար յայտարարութիւնը չէ այս զօր ըրած եմ, այլ պաշտօնական տեղէ լսած եմ, Պատրիարքարանի մէջ, և նոյն կրինուած է նաեւ յատենի Կրօնական ժողովոյ : Ես այս խօսքով ոչ թէ բողոք ընել ուզեցի, այլ դիտել տալ թէ ի՞նչու կրօնական ճնողով Դիւանազպարին կը վայցուի 800 զըլ տամսական, մինչ այլոց կանխավճար իսկ կ'ըլլայ : Կարելի է Պատրիարքարանի Դիւանազպարութիւնը ալ ծանր եկած լինի այս դիտողութիւն, բայց կ'երեւի թէ իմ խօսքիս բուն ոգուցն չ'են թափանցած, զի ես յօյթ գոհ կ'ըլլամ եթէ Կեղրուական անտուկը բաւական դրամ ունենայ գոհացնելու համար իր պաշտօնեացն և ՚ի հարկին օգնելու անոնց :

Ես միայն ինդրեցի թէ այն խնամքը որ կը տարուի Պատրիարքական ժողովոյ Փիւտ նադպարաց համար, նոյն տարուի նաեւ կրօն

ժողովոյ Դիմանադապրաց նկատմամբ, որոց խընդիրն զ'արդ չ'կարգավորուեցաւ և հետեւապէս կրօնական ժողովոյ գործերն կ'ընթանան կազմն 'ի կազմ :

Թէրի ատենազդրութիւն մ'է նաև Զ. նստի ատենագրութիւնն, յորում՝ երթու 146, առաջին միջամիջի վերջը, իմ մէկ ընդմիջումա, փոխանակ զրուելու Զերակ էքինտի խօսքէն անմիջապէս ետքը, դրուած է Փափազեան է-ֆէնտի խօսքէն վերջ, որով համոզմանս բարձրութիւն հակասակ արձանագրուած է այն : Եթու Զերակ էքինտի ըստ թէ « գաւառացի դաստիարակներն կը թուին ինձ լինի նուազ փափկառու և նուազ թեթեւարարոյ բան Պօլս սեցի դաստիարակներն, որք ընդհանրապէս կը խրտչեցնեն գաւառական ժողովուրդն՝ կրօնական, բարյական և յարաբերական տեսակի տներով . . . » ես ընդմիջեցի ըսելով թէ « շատ ճշգրտ է », մինչդեռ իմ այս ընդմիջումը դըրուած է Փափազեան էքինտի սա խօսքէն յետոյ թէ « թեթեւութիւնը Պօլսոյ մէջ մէկ գըպորոցի միայն կ'ելնէ :

**ԶԵՐԱԶ Մ. ԷՅ. —** Հետանդանացի գոլորշին կ'ակնարկէ անշուշտ, որմէ ելած է :

**Տ. Խ. ԱՐՔԵՊՈՍԿ. ՆԱՐ-ՊԵՏ. —** Վերջապէս այս դիտողութեանց նախառակն է ցոյց տալ թէ՝ երեսփոխանք ալէտր չէ որ երբէմ ատենազդրութեանց մէջ տեղի ունեցած սխալմանց վրայ հմտնեն իրեւանց փաստերն :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. —** Դուքը, Սրբազնն, վեց երրորդ նստի վերայ կ'խօսիք, որ շատոնց ժողովն վաւերացեալ է, բայց ինչ և իցէ, այս բայցառութիւն կ'համարուի :

**Տ. Խ. ԱՐՔԵՊՈՍԿ. ՆԱՐ-ՊԵՏ. —** Ես տականին շատ պատասխաններ ունիմ կամարական էքինտի դէմ, բայց օգտակար չ'եմ համարիր 'ի կիր արկանել ջանանք այժմ : Բաւար-

կան է միայն որ իմ այս կարճ դիտողութիւնը քըս արձանագրուին յ'ատենազդրութեան :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. —** Պիտի արձանագրուին, Սրբազնն, և հակառակ պարագայի մէջ իրաւունք պիտի ունենաք բոլորելու :

**Ա.Հ.Ժ. ԽՈՏՔԸ ԱՋԻՄԱՆԻ ԷՔՖԻՆՈՒՅՆ Է:**

**ԱԼԻՔԸԱՆՆԱՅՆ Մ+ ԷՅ. —** (Գրաւոր) Օքոսան, Յի նուին մէջ Տնտես, Խորհրդոյ անդամ կամարական և. էքինտի իւր ատենաբանութեանը մէջ (տես Ատենազդրութիւն Ը. նստի յերես Զկ., սինակ Ա.) իմ անձիս դէմ սա անսարկութիւնն ըլած է : « Ալիքսանեան Մտոթիոսարդ իւր ազգ. առքը բուրբելն դրամ մ'իսկ չէ հմարած » : կամսարական էքինտին չ'գիտեր թէ, ի Պօլս սոնդիմուղ գաւառացի ազգայինը պարագան չեն կեդր սննդուկին ուղղակի տուրի վճարելու : Այս ինչիքին քանիցու յուզուած է աստ, և ես իրեւ գաւառացի պնդած եմ որ, կամ պէտք է որ ընտրական իրաւունք ևս սրուի գաւառացուց, որ ի Պօլս կ'պանդիմուին, և կամ անոնցմէ ուղղակի տուրի շատհանջութիւն :

**ԻՐԱԿ. ԿՈՆՄԱՐՏՐԱԿԱՆ ԷՔԻՆՈՒՅՆ ՕՐԻՆՔ ՄՇ ցուցնել, որով սրոշուած ըլլոյ թէ ի Պօլս պանդիմուղ գաւառացիք պարտաւոր են ազգ. ուղղակի տուրի վճարել կեդր. սննդուկին :**

**Բայց ես կինամ Ազգ. Ժողովով հաստատեալ օրէնք մը ցուցնել, որ է « Պանդիմուած պագտինք տարեկան տուրբերնին ընտանեօք բնակութիւնն հաստատած աեւդոյն ազգ. ուղնակին վճարելու պարտաւոր են » : Եւ այս օրէնքին Վարչութեան կողմէն գործազրուած ըլլոյուն համոր հարցում ըլած եմ ժամանակին թէ, « Արդեօք Ազգ. ծողովին որ և է մէկ սրոշուր Վարչութեան կողմէն գործազրուի ըլլոյուն համոր կրկնին սրոշման կ'արօտիքին պահանջութիւն դէմ է » : Եւ բազ, ծողովին այս հարցման Զ<sup>1/2</sup> ամիս ետքը պատասխաններ է թէ « Սոյն հարցումն նկատու-**

դութեան առածէ, բայց առ այժմ մտնաւորապէս պատասխանելը պատեհութիւն չ'համար բերզ, արժան կը վասէ անոր նկատնամք պէտք եղած տեղեկութիւնը լիովին տալ իւր համարատութեան ժամանակի» : Այս հարցումն և պատասխանն 1873 էն՝ 'ի վեր կ'մասն տակափն խնդրոց կարգի տուժարի մէջ, (տես տեղեկագրի Մայր Գիւանի ՚ի վերայ Եղ անլցջ խնդրոց, բացում 1878 ամի նիստ ԱԱ. երես 459, սիւնակ Ա.): Խոստոցեալ համարատութիւնն ալ մինչեւ ցարդ չերկցաւ, որպէս զի տեսնուէր թէ ի՞նչ պատճառաւ գործով Պատրիարքարան գնացրող պանդուխտ գաւառացիներին ազգային տուրք կ'պահանջուէր: Եւ այս զեղծումը թերեւս մինչեւ ցարդ ՚ի գործ կ'դրուի. գիտցողէն չեն համարձակիր պահանջել, ինչպէս որ ց'արդ ինէ պահանջուած չէ, և ոչ խկ իրրև երեափախան, այդպիսի վճարման մը համար հրաւէր ստացած եմ, ինչպէս կը յայտարքէ կամսարական էֆէնտիին թէ՛ բարոր երեսիօխանայց հրաւէր գրեցինը իրենց տրոց մնացորդը վճարելու, իսկ չ'գիտցողէն կը պահանջեն և կառնուն: Այս տեղն եկաւ ըսել կամսարական էֆէնտիի թէ՛ իւր անփորձութեամբ կեզր սնտուկը վոանդի կը հանդիպեցնէ:

Սակոյն եթէ իրրև պանդուխտ գաւառաւ ցի ՚ի Պօլիս քուէի մասնակցելու իրաւունք չունենալով, ազգային տուրք վճարեէլ ազատ մընացեր եմ, միթէ իրրև ժողվուրդի իմ գտնուածթաղիս իմ ձեռքէս եկած զրամական օգնութիւնը զլացած եմ, քառ լիբի. միթէ հարկ եղած առեն կեդր, սնտուկին ևս օգնել չե՞մ մոռաբերած. Պատրիարքարանը տմէն անդամ միթէ ինձ շը զմեր և խնդրեր որ կառնիկի վճարեմ իմ գաւառիս մուգաթա տուրքը և ահա իմ բախ կը գտնուի տակափն 1884—1885 ամի կամախու մեր Վիճակին մուգաթայի արոց ընկալազիլը. բանդի տակափն նախընթաց 1883—84 է՛մ ստացած Վիճակին էն, որ այս վերջինն ալ ստանալու համար

դրկեմ՝ անդ, և այս պարտքը Մայիսը չեկած ինէ խնդրուած է, 1884 փետրվար 2 ին վճած բած եմ՝ այդ 500 դրուչն, ահա ընկալազիլը. Ի՞նչպէս շուրջ մուցեր է Կամսարական էֆէնտին որ ննաւս Խորհրդոց պաշտօն կը վարէ, մինչդեռ իւր օրով ինէ խնդրուած է այդ կան խամարն ընեւ, ոյլ ևս յօժարութեամբ վճար վճար եմ:

Եերազ Ա. էֆէնտիին ալ միննոյն ննաւին մէջ ըսեր է թէ և Ալիքաննեան Քաղ. ժողովոյ անդամ երած տաեն ինչո՞ւ Վարդապետանոցով չըլապեցաւ փախանակ էֆէնտի Վարդանով զրադերու: Պատերազմի տաենն էր, երբ ես ալ, թէ և անարժան՝ կոչուեցայ Քաղաքական ժողովականութեան, այն միջացին ոչ որ կրնար մոսածէ Վարդապետանոցի վրայ, պատերազմին անմիջապէս յետոց ազգին փիճակն առաւ և յատնի է Զերազ էֆէնտիի, ո՞վ կարեւութիւն կուտար վարժապետանոցի . . .

ԶԵՐԱԶ Ա. ԷՖ. — (Էնդիջելով) Միթէ պատերազմին տաեն և այդ միջացին Հայոց գլուխութիւն կարուածօծ էին:

ԱԼԻՔՍԱՆՆԵԱՆ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Կա էֆէնտի Վարդանն խնդրոյն մասին կ'ըսեմ թէ Զերազ էֆէնտիի նման մեր անմեղութեամը չը հաւատացող տնձանց չնորհիւ 21 ամիսներ գեղեցեցնոք Աստիկանութեան գուու. բայց չնորհիւ արդարադատ կառավարութեան մեր անմեղութեան վճառդիրն ալ ստացանք:

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. — Ամէն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ա. ԷՖ. — Եւ ընդ հոգույթում:

ԱՏԵՆԱՊԵՏ Է. ԷՖ. — Ութերորդ նասի առենագրութեան վրայ եթէ որիւշ զիտողութիւն ունեցող չ'կայ, քառէի պիտի ենթարկեմ զոյն:

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. Էֆ. — Ես եւս քանի մը դիտողութիւններ ունիմ : — Երես 216, ես ըստ եմ թէ՞ և հարկ է դրամականի մասին Ալարչութեան հարցնել, քանի որ խնդիրն դրամական է, եթէ այժմ մենք մենք ուրոշում մը տանք, ինքզինքնի խաբառ՝ և միանդամյն ապագային վիճաբանութեան դըռներ բացած պիտի լինինք» :

Նոյն երես, դարձեալ ըստ եմ և արդէն կրօն, Ժողովոյ և Պուտիմ. Խորհրդոյ Դիւտնադպրոց ստորի կը վճարուի « և յարեցի, և քանի որ Յանձնախումբ պիտի կազմուի, անոնք թող խնդիրն լու մը քննեն, եթէ սրնտուկն կարենայ վճարումներ ընել, թող Ժողովոյս տեղեկողութիւն» : Ենաւ մասուած է հետեւալ պարբերութիւնը : « Մէկլիքեան է թէնտի կըսէ թէ Պատրիարքարանը թող քիչ մը պարտք ընէ, բայց գիտնալու է որ փարկ չ'ունեցող տաւն մը պարտք չ'կրնոր ընել, ենաւ պէտք է Պատրիարքարանի վարկն շտկել» :

ՓԱՖԱՁԵԱՆ Ս. Էֆ. — (Առ կամսարական է հենատի) Կամսարական է ֆինանտի, այդ նուորին մէջ, Պատրիարքարանի ներքին գեղծմանց վրայ քիչ մ'աւելի յ'անուանէ և մանրամասն տեղինութիւններ տուիք, որք յապատեած կը տեսնեմ՝ ատենագրութեան մէջ : Ի՞նչու այդ մասին դիտողութիւն չ'էք ըներ և միայն դրամի չ'գողութեան կէտերն կը յիշենէք :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Իրաւունք չ'ունիր, Փափազեան է ֆինանտի, բանանաւ Երեսինանի մը վրայ որ իւր խօսքին այսինչ կամ այն ինչ կէտերն ուղղէք, կամ բարեփոխէք : Գուռք միայն Զեր խօսիք անձիշտ կէտերն ամրողացնելու իրաւունք ունիք :

Ես ուշ դիտողութիւն ունիմ և դրաւոր պիտի տամ միւնանին :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. Էֆ. — Նիստ Ա. Երես 196 Բ. սիւնակի իմ խօսքիս երրորդ պարբերութիւն

նը այսակէս պիտի ըլլայ . « Կան կարդ մը երեսփոխանների , որք երր կաթողիկոսական , Պատրիարքական , կրօնական և Քաղաքական Ժողովոյ ընտրութեանց խնդիր մէջ տեղ ելնէ, յայնժամ միսցն կ'փութան երեւնալ . . . . իսկ այս տեսակի պիտունէի . Պատրիարքակութեան և այլ կարեւոր խնդրոց յուզման պաշտուն չ'են գար . . . . » :

Նոյն խօսքիս վերջին պարբերութեան վերջն ալ պիտի աւելնայ , « Եեր ընտրուզաց և Ազգին առջեւ ժանր պատասխանատառութեան ներքեւ պիտի մեամք » :

Երես 201 Ա. սիւնակ, այս խօսք պակասէ , « բայց երր Պատրիարքը Նախագահ չ'որոշէք, Ատենապետը երիցագոյն եկեղեցական մը առ Ժամանակեանց նախագահութեան կ'հրափրէ, ինչպէս միշտ այնպէս եղած էն :

Արիշ դիտողութիւն չ'լինելով՝ Ատենապետ քէ, Ժողովոյ ընդունելութեան կ'ենթարկէ Ը. նստի ատենագրութիւնն որ կը ՎԱԼԻԵԹԱՑՆէ հանգերձ եղած դիտողութեամբք :

Ասպարագու է ֆինանտի ժողովոյ ընդունելութեան կ'ենթարկէ թէ. նստի ատենագրութիւնն և կը հրափրէ զերեսփոխանս 'ի դիտողութիւն :

ՓԱՖԱՁԵԱՆ Ս. Էֆ. — Երես 220, սիւնակի Բ. նախարարաց նիստի ատենագրութեան վրայ իմ դիտողութիւններս զրաւոր ներկայելէ անմիջապէս յետոյ, Զերազ Մ. է ֆինանտի իւր գրաւոր դիտողութիւններն ներկայեց, որ առձնագրուած է ատենագրութեան մէջ, բայց նախ բերանացի յայտնեց թէ Պահպահեանի դիտողութեան վերջին մասն, որ իւր մի ընդմիջման սրբագրութեանը կը վերաբերէր, Կը հաստատէ : Այս խօսքն ատենագրութեան մէջ կը պակսի :

Երես 224, սինակ Բ. Զերով էֆէնտիփ դիմողութիւնը աւարտելէ յետոյ խօսք մ'ունիմ', որ բոլորովին վերցուած է ատենագրութեան մէջն և Խ ըստ թէ և Զերազ էֆէնտիփ բոլորովին նոր յաւելումներ կ'ընէ ատենագրութեան վրայ. բանզի այնափի ընդմիջումներ կը նշանակէ, որնց չպատասխաննել անկարելի էր ինձ. օրինափի համար, ինը կըսէ թէ, իսր Աւառումական Խորհրդականութեանը ժամանակ ալ կարծիք յայտնած է թէ Պատրիարքանը կարող պատասխան պատուից, մինչ ես լսակը յիշեմ թէ ինքն իրեւ Ատենադպիր Ռև. Խորհրդայ ստորագրած է 1883 Քետր, 22 թուականը կրում այն ծրագիրը Կեդր, Վարժարանի, յորում 300 սոկի ալ Կեդր, սնտուկէն կը պահանջուէր, և որ հրատարակուած է Մասփի մէջ նոյն ժամանակին » :

Երես 225, սինակ Բ. Ֆողովին որոշման մէջ միայն Մագպուլեան Հ, էֆէնտիփ հարցագրին յլումը նշանակուած կը տեսնեմ, մինչ ծովովն որոշեց իմ յառաջադպն հարցումն ալ յիշեցնէլ Վարչութեան :

Երես 226, սինակ Ա. Խօսքիս սա մասը, « այլ բոլոր Ելմուսկան և դրամական խնդրոց մէջ Վարչութեան հետ համախորհուրդ պիտի գործէ », պիտի ըլլայ, « այն Ելմուսկան և դրամական խնդրոց մէջ, որք Վարչութեան ձեռնհասութեան սահմանին մէջ են, Վարչութեան հետ համախորհուրդ պիտի գործէ, և գործադրութեան տեղեկագրը հետզետէ պիտի մասուցանէ Ֆողովիս: Խոկ Վարչութեան ձեռնհասութենէն վեր եղաղ խնդրոց համոր Վարչութեան հետ ունեցած խորհրդակցութեան արդիւնքը պիտի տեղեկագրէ Ֆողովիս: — Ըստ այսմ պէտք է պարզուի և չշղուի Ատենապետ էֆէնտիփին նոյն սինակին մէջ ըրած յայտարարութիւնը, որոյ համար ես « բաւական յ յայտարարած եմ »:

Երես 229, սինակ Բ. Ա. Երուսալիմաց պարտուց բարձման վրայ խօսքիս երկրորդ մա-

սը պիտի ըլլայ սասպէս, « Ո Փողովը կողմանէ կարգեալ Յանձնաժողովը միանգամ խորհրդակցութեան ընդունութիւն և միջրան մասին կարելի չեղաւ համաձայնութիւն դոյացը նել, ուստի արժան դատավեցաւ նախ ի դա սաս զինուորական տուրք վճարող աղջայնոց ցուցակներն ի ձեռին ունենալ, որ մեր խորհրդակցութեան իրեւ հմտ պիտի բռնուին, և առ այս հարկ եղած խնդիրն Վարչութեան կողմէ մատուցուեցաւ առ Բ. Դուռն Սակայն » եւայլն :

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. — Փափազեան էֆէնտիին կը յայտարարէ թէ հաստատած եմ իւր ընդմիջմանց միոյն ստուգութիւնն, կը պիտի, եթէ կը կարծէ թէ արձանագրուած խօսքերուս իմաստն տարբեր յայտարարութիւն մը ըրած լինմէ:

Կը վերահաստատէ իւր այն ընդմիջում թէ յաւելումներ ըրած եմ սրբագրութեանց մէջ, ես ալ կը ստիպուիմ վերահաստատէլ առ այս տուած պատասխանո թէ Փափազեան էֆէնտիին յատուկ է յաւելումներ և յասպառմանը ընել իւր խօսից արձանագրութեան մէջ, ինեւ զաթիւքելով ատենագրութիւններն : Ելմուսկոցի ատթիւ ըստած էր թէ ինք չիշանանութեան գէմ մաքաւած է », և ապա ատենագրութենէն գեղած է այդ խօսքն, առ որ պատասխանած էի թէ « ուրեմն անիշտանութիւն հաստատած է »: Ուրիշ օրինակ » :

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Ֆ. — Հարկ չ'է օրինակ տալ:

ՓԱՓԱԶԵԱՆ Մ. Է.Ֆ. — Դիւանին ձեռքն է զայն արձանագրել կամ յապաւելը, զի բոլոր խօսքերս չ'է կընար յիշել ես :

ԶԵՐԱԶ Մ. Է.Ֆ. — ( շարունակելով ) Փափազեան էֆէնտիփ կը վերահաստատէ նաեւ իւր այն ընդմիջում թէ Ուսումնական Խորհրդայ

անդամ՝ եղած տաենս 300 ոսկի տալու կարող նկատած եմ՝ Պատրիարքարանն . ուստի պարտաւոր եմ՝ վերահստատել տռ այդ ըստած պատասխան թէ ես Աւստրիական Խորհրդոց մէջ 500 ոսկոյ անկարելութիւնն յայտնած եմ և թէ 500 ոսկի տալու անկարողլինելէն չը հետեւիր թէ Պատրիարքարանն 300 ոսկի այլ տալու անկարող է : Այդպիսի յայտարարութիւն մը տրամաբանական չ'է բնաւ:

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Էֆ.** — (Պատասխանելով) Այս 500 ոսկոյ ընդմիջումն ալ ետքն աւելցած է :

(Սին պահուն Առենասարեաւ է փէնտի դիտել կուտայ թէ Երեսափախանէ առ Երեսափախան խօսակցութիւն արգիլեալ է) :

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Էֆ.** — Այս զիտողութիւններէս յետոյ, ուրիշ զիտողութիւն մ'ալ ունիմ :

Տայր-Դիւտոնին կողմանէ առ Մէրեէմ-Գուլի է փէնտի ուղղեալ զիրն չ'կարդացուեցաւ ժողովին մէջ, բայց թ. նասի ատենազըռութեան մէջ արձանագրեալ կը տեսնեմ զայն . Եթէ կարդացաւած լինէր, զիտողութիւն պիտի ընէի՝ «Այն Եռո Եռանդին ու խոնականութեան շնորհին որք կը տիրեն այժմ ժողովին մէջ» . Խօսքին դէմ, որ չը համապատասխաներ ժողովոյ որոշման, վասն զի կը նշանակի թէ կարժամանակ իմը, յորում ժողովս եռանդ ու խոհականութիւնն չ'է ունեցած : Այս ակնարկութիւնը ժողովիս արժանապատուութեան համար վիրաւորիչ՝ կը նկատեմ, առանց սասկայն գոշել ուզելու Մէրեէմ-Գուլի է փէնտիի արժանապատուութեան զոր կը յարգիմ և որոյ ներկայութիւնն այսօր ժողովոյս մէջ ուրախութիւն կը պատճառէ մեղ ամենու :

**ԹՈՐՈՍԵԱՆ Յ. Էֆ.** — Ժողովոյս մեծամասնութիւնն ալ ձեր այդ զիտողութիւնը վի-

րաւորիչ կը նկատէ, Պատրիարքան է փէնտի և չ'ընդունիր զայն :

**ՄԵԼԻՔԵԱՆ Մ. Էֆ.** — Ես ալ կը ձայնակցիմ Պատրիարքան է փէնտիի և կը հաստատեմ նորա զիտողութիւնն :

(Բազում նատարաններէ բողոքանաց ձայներ կը բարձրանան ընդգէմ Պատրիարքան է փէնտիի զիտողութեան )

**ՄԱԿՊՈՒԼԵԱՆ Հ. Էֆ.** — Պատրիարքան է փէնտիի ըրած զիտողութեան միտքը լաւ համացուելու համար պէտք էր որ գրաւար յանձնելու զայն : Ես այնքան անհիմն և անտեղի կը գտնեմ այդ զիտողութիւնն որ մինչեւ իսկ կ'առաջարկեմ չ'անցնել զայն ատենազըռութեան մէջ :

**ԶԱՅՆԵՐ :** — Այս չ'այն, անտեղի է այդ զիտողութիւն և չ'որդեր անցնել ատենազըռութեան մէջ :

**ԱՏԵՆԱՊԵՏ Է. Ֆ.** — Այս զիրն Ա. Ատենապետ, Եռանդական է փէնտի ներկայութեան պէտք է ինչպի՛ ըլլայ : Հաս իս ժողովոյն մէջ չ'կարգացուած գիր մը չ'արձանագրուիր, ինչպէս որ առ կարդացաւած գիր մը ի հարկէ կ'արձանագրուի, բայց Ատենապետ է փէնտին եթէ կ'հաճի, թող պատասխանէ :

**ԱՏԵՆԱՊԵՏ Է. Ֆ.** — Երբ անցեալ նստին մէջ Ատենապետ է փէնտին ժողովոյդ հաղորդեց Մէրեէմ-Գուլի է փէնտիի ընդունելութեան զիրն, որ մեծաւ գոնունակութեամբ լսուեցաւ, յայտարարեց միանգամայն թէ պատրաստ է ընթեռուու նսեւ Գիւանի կողմանէ առ այն ուղղեալ հրաւիրագրին, ասկայն երեսափախան Տեարք ընդ որս եւ Պատրիարքան է փէնտի փափաք յայտնեցին որ հարկ չ'կայ կարդացու, թող անցնի ատենազըռութեան մէջ, գիւանս ալ ըստ այնմ չարժեցաւ:

ՍԸԿԱԾԵԱՆ Կ. ԷՖ. — (Առ. Փափագեան էֆենտի) Փափագեան էֆենտի, լոնց պիտի պատասխանէք Ատենազպիր էֆենտիի բացարութեան, որ սառյգ իրողութիւնն է :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Իմ պատասխանս սա է թէ, այդ գրոյն մէջ յիշատակած պարբերութիւնն Փողովոյս արժանապատութիւնն վիրաւորելու գոյն մ'ունի : Քանի որ Դիւանը անցեալը չը միշտու կոչում կընէ Մէրէքմ—Գուլի էֆենտիի, ինչ հարկ կար անցեալին ակնարկութիւններ մնել իւր գրոյն մէջ, մանաւանդ թէ ժողովն չորսչեց այդ նամակն արձանացրել ատենազրութեան մէջ առանց հոս կարգացուելու :

ԱՏԵՆԱՐԴՊԻՐ ԷՖ. — Տուած բաղատրութենէս յետոյ, Փափագեան էֆենտիի այքան պնդելը զարմանալի կը թուի ինձ . կը կրկնեմ թէ՝ ժողովդ միամայնուրեամբ որոշեց առանց յիշեալ գրոյն ընթերցումն լսելու, անցնէլ զայն ատենագրութեան մէջ . Խաղ չենք խալար հոս Փափագեան էֆենտի : Դիւանս անկողմանակալութեան և անշատութեան շատ և շատ փորձեր տուալ իր պաշտաման մէջ և պիտի շարունակի այնպէս, և քանչի քանչի անցամելը դրաւատեցիք մեր այս ընթացք : Այժմ ի՞նչ ըստել պիտի ուղէք . Խարած ենք զնեզ, քանի որ իրազութեան գէմ կը մաքառիք և կուղէք այլայլել լսնդիրն, ևս ՚ի պաշտօնէ կը բողոքեմ ձեր այդ լնթացից դէմ . զի մենք գործադրեցինք ինչ որ ժողովդ որոշեց :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենազրութեան մէջ այդպիսի յիշատակութիւն չ'կայ :

ԱՏԵՆԱՐԴՊԻՐ ԷՖ. — Այլ խնդիր է այդ . Դուք ներկայ էք սախորդ նատին եւ շատ լւա կը միշք ժողովոյ որոշումներն . մեղ ճշմարտութիւնը պէտք է, որոշուեցաւ թէ ոչ, այս խօստովանելու հք, զի ձեք մէջ տեղի ունեցած

պակասութիւնն խիստ կը տարբերի Զեր նպատակէն : Հատ անդամ պատահած են ձեւի պակասութիւնք, որք սակայն իրողութիւնն չ'են խեղաթիւրած բնաւ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Բնաւ լինելած չ'է ես չեմ յիշեր որ ժողովն առանց կարդացուելու, ատենազրութեան մէջ անցնել որոշէ Դիւանին գիրը :

ՍԸԿԱԾԵԱՆ Կ. ԷՖ. — Աւրեմն հարկ կը լայ, Փափագեան էֆենտի մէն մի խօսքին համար ստորագրութիւն առնուլ իրմէ, վասն զի ինքն ալ ձայնակից էր Սայր-Դիւանի գիրն ատենազրութեան մէջ անցնելու որոշման :

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. — Ստորագրութեան վերայ ալ գիտուղութիւնն կընէ յաշորդ նիստին :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Խս դարձեալ կը սեմ թէ Դիւանը պէտք էր զառշանար այդ անսակ վիրաւորիչ պարբերութիւնն մը զնելէ առ Մէրէքմ—Գուլի էֆենտի ուղելավ պաշտօնացրոյն մէջ, քանի որ այդ պաշտօնազին յ'անուն Ազգ . Ժողովց կը յոցի :

ՄԵՐԵՑՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Խօսք կ'ուղեմ անձնական գէպի համար :

( Բազում նստարաններէ դժգոհութեան ցոյցեր տեղի կունենան եւ բողոքոյ ձայներ կը բարձրանան ընդդէմ Փափագեան էֆենտիի եւ աղմուկ կը տիրէ ժողովին մէջ . — Ատենապետ էֆենտի ՚ի զուր կը ջանայ ՚ի ձայն զանց պակի բարեկարգութիւնն վերահաստատէլ ) .

ՍԸԿԱԾԵԱՆ Կ. ԷՖ. — Փափագեան էֆենտիի, եթէ ձեր ժամանակը արժէք չը տնի, մերը ստակ է, ուստի այս տեսակ թժախնդրութեամբ մի՛ զարգեցնէք զմեզ : Աջանուինք գոնէ այս նստաշը անի մէջ օգտակար լլլալ ալզին :

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. Էֆ. — Ես ալ կը բողոքեմ Փափազեան էֆէնտի խնդիր յարուցանելուն դէմ:

ԱԱՆՁՄԵԱՆ Մ. Էֆ. — Արդէն Փափազեան էֆէնտի յիշասակած պարբերութենէն Ժողովյա նկատմամբ աննպաստ մեկնութիւն մը չ'ենէք ։ Նորը ազէկ է ըսեն, չ'նշանակէլ թէ հինը բացարձակ գէւ էր :

ԱՏԵՆԱԳՊԻՐ Էֆ. — Վերստին կուգամ յայտարարել թէ՝ Ժողովը որոշեց սոյն նամակոն առանց կարդացուելու, անցնել առենազըրութենան մէջ, և այնպէս եղաւ : Ասի վերըստին խնդիր ընել բողորովին աւելորդ է :

ՓԱՓԱԶՄԱՆ Ս. Էֆ. — Ես ալ վերստին կրսեմ թէ՝ ատենազրութեն մէջ նշանակած չէ այդ տեսակ որոշում մը : Նոյն նատին մէջ Ատենագպէտն պարտաւոր էր ըսել թէ՝ « աստ սյս նամակը, կուգէք որ Կարդամ թէ ոչ » և Ժողովը որոշէր :

ԱՏԵՆԱԳՊԻՐ Էֆ. — Ատենազէտ էֆէնտին ճիշդ ձեր այդ բառերով Ժողովյա որոշումն առաւ, ում մասնակցեցաք և դուք :

ԶԵՊԱՆԵԱՆ ԵՒ ՍԸՆԿԱՃԵԱՆ Էֆ. — Այդ տեսակ խեղաթիւրումներ աննպաստակ չեն կը ընար ըլլալ Փափազեան էֆէնտի, այդ ասուին խծրծանք ներելի չեն :

ԶԵՐԱԶ Մ. Էֆ. — Ի՞նչու չէք թողուր որ Փափազեան էֆէնտի խեղաթիւրէ, բանի որ դուաւ խոսքութիւն հանելու ասուիթ մը :

ՓԱՓԱԶՄԱՆ Ս. Էֆ. — (Առ Զերազ Էֆ.) Դուք ես խեղաթիւրողն ։

( Ներսիսիանը մեծամասնութեամբ կը բողոքեն Փափազեան էֆէնտի դէմ, յայտնելով

թէ՝ այս աստիճանն խծրծել և ժողովոյ ժամերն սպառել անխղճութիւն է ) :

ԱԱՆՁՄԵԱՆ Մ. Էֆ. — ( Յուզեալ ) Բայւսական է ալ Փափազեան էֆէնտի, ինչ որ բեր մողովոյս և Ազգին զիմուն : Ազգին տունը կը կործանեա, ամօթ և նախուտինը, Ազգը ձեր ձեռքէն խաղաղութիւն չաղիւտի տեսնէ :

(Փափազեան էֆէնտի դէմ բողոքոյ ձայն ներ կը սաստկանան, և երեսիսիսանց մեծ մասն սորի ենելով, նիստը կը խանգարի, որով Ատենագպէտ էֆէնտի կատիութիւն տասն վշտու կենի համար փակել զատեանն է :

Տասն վայրկենի դադարին յետոյ, Ատենագպէտ էֆէնտի վերանին կը բանոյ տառեանն և կը հրաւիրէ զՄէրեէմ—Գուլի էֆէնտի խօսք առնուլ զդր նախուտիս ուզած էր աննական դէսի մը համար ) :

ՄԵՐԵՒՄ-ԳՈՒԻՆ Ս. Էֆ. — Երբ Փափազեան էֆէնտի ատենազրութեան վրայ դիսուղութեանց շարբին մէջ, Մայր-Դիւանին առ իսուզեալ պաշտօնագրին վրայ ալ խօսքեր ըսրաւ, տարակյա չունիմ թէ ինձ նկատմամբ որ և աննպաստ ակնարկութիւն մը լունելու միտք չունէր և իւր խօսքեր ժողովոյ արժանապատութիւնը պահպանելու նպատակաւ էին : Ես այնչափ կը հաւասար ասուր, որքան Փափազեան էֆ. ՚ի վորդոյ գիտէ և կը հաւատաց թէ որ աստիճան նորանձամանդիւր եմ ես Ֆոլովոյ արժանապատութեան նայ աղմուկի և խօսքերու շփոթութեանց մէջ չիրցի խօննաւլ թէ՝ Մայր-Դիւանի պաշտօնագիրը Խնդրոյ նիւթի է ժողովոյ համար իմ պատասխանազիրս ալ պայցամանի տակ կը լինի ինձ համար և հետեարար

իմնդրոյ նվազթ, բանի որ յանուն ժողովց արձանագրուած գրայն վրայ հիմնեալ է ոչ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — (Առ. Մէրեկմ-Գուլի հՖ.) Խնդրու սա էր թէ՝ ժողովին մէջ չկարգացուած գիր մը ատենագրութեան մէջ անցեր է ըսկին, ձեզի նկատմամբ խօսք ոչ չկար Ռւսափ կը խնդրեմ որ սոյն միջադէպին վրայ այլ ևս չ' խօսփինք, վասնզի Թրղ նատի ատենագրութեան համար և ոչ մէկուն խօսք պիտի տամ:

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՅ. — Բոյց Ատենապէտ է Փէնտի, չպատասխանեցիր Մէրեէմ-Գուլի է. Փէնտիի ըրած հարցման: Կը վախարդինք որ Պատ. Դիւնութ բարեհաճի յայտարարել թէ՝ Մէրեէմ-Գուլի է Փէնտիի երեսփոխանութեան վերընդունելութիւնը խնդրոյ նի՞ւթ է թէ ոչ:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՅ. — Կը տեսնեմ թէ խնդրին սիսուլ կը մեկնուի: Մէրեէմ-Գուլի է. Փէնտիի երեսփոխանութիւնն ընաւ խնդրոց ներքն չ' է:

(Հաւանուրին Ցամենուստ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կը յայտարարեմ ՚ի Դիւնութ թէ՝ Մէրեէմ-Գուլի է Փէնտիի երեսփոխանութեան վերընդունելութիւնը կատարուած և ժողովիս շուշութեամբ ընդունուած իրողութիւն մ'է և բնաւին խնդրոյ ներքեա իշանալու հանդմանն շունի: Հետևապէս միջադէպն վակեալ է:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Խօսք կուզեր անձնական գէսպի մը համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այլ ևս խնդրին վակուած է և չ' եմ կարող խօսք տալ ոչ մէկ երեսփոխանի: Եւ եթէ դուք խօսիք, ժողովց մէջ ժխոր պիտի ենթէ կրկին:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Ուրեմնեա արձանապրեցէր թէ խօսք խնդրեցի և չտուիք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Շատ լաւ: — Այժմ ես ևս հետեւեալ դիտողութիւններ ունիմ սղն նատի ատենագրութեան վրայ:

Թ. Նիստ 226 երես Ա. սինակ, Ատենապէտ է Փէնտիի խօսքէն վերջը իմ սա ըստան պիտի աւելնայ և Պէկեան է Փէնտիի խնդրոց եթէ Օրակարգը չէ, պէտք է Օրակարգը անցնի և ներկայ Օրակարգին վերջնը ըլլալու սրյամանաւ:

Երես 230 Բ. սինակ, Զերագ է Փէնտիի խօսքին ձայնակցելով՝ առաջարկեցի նորեկ երեսփոխան Տամատեան Ստեփան է Փէնտիի ժողովոյն Գ. Ատենագրութեան, և Ատենապէտ է Փէնտիի համեցաւ առաջարկութեանս:

Երես 233 Բ. սինակ խօսքին մէջն կը պակսի, « մեր Նէկէցական գարաւոր օրէնքն է, առաջնորդները կը ժողովրդէն ընտրուիլը, Սահմանագրութիւնն եւայն ։ ։ ։ »

Կրկին նոյն խօսքիս մէջ պիտի աւելնայ, « Վարչութեան պարտքն է նաեւ գաստիարակութեան յառաջդիմութեան, դրամ հայթայթել ։ ։ ։ »

237 Երես Բ. սինակ, ևս ըստ պայտ է Նէկէցակայ օրէնքնու:

238 Երես, Սուրէնեան է Փէնտիի խօսքին ինչ ինչ ակնարկութեանց և իրաւունք ունի ըստած են:

Սոյն դիտողութիւններէն յետոյ, Ատենապէտ է Փէնտիի ժողովց ընդունելութեան կենթարկէ Թ. Նատի ատենագրութիւնն զոր Կը Վ. Ա. Ե. Ե. Հանդերձ եղած դիտողութեամբը:

### 3.

Հարաժարագիրը յերեսփոխանուրենէ Արուբէն հՖենտի կամաց կերպանի կը Սարկու կը հՖենտի Աղաքէգեանցի:

Ատենապէտ է Փէնտիի ժողովին կը հաջոր-

Քէ նախ Կիւմիւշկիրտան Ռուրէն էֆէնտիի հետեւեալ հրաժարապիրն :

Կատեմափայլ Ատենապետ էֆէնտի  
Ազգային Երեսփոխանական Ժողովոյ .

Տէր իմ .

Կը խնդրեմ որ բարեհաճիք ջնջել Ազգային Երեսփոխանական ցանկին մէջն իմ անունս , զի անձնական դրադմունքներս արգելք եղած են ինձ այդ մեծ պաշտօնը խզի մտաք կատարելու :

Մնամ Զերդ և Ազգիս միշտ խնարհ ծառայ

Թ. Կիւմիւշկիրտան

30 Օգոստոս 1884

Կ. Պօլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այս հրաժարապիրն պարզ է , ուստի առզալի ժողովցոյ բուէն կենթարկեմ զայն :

Տ. Ե. ՎՐԴ. ԱՅՎԱԶՅԱՆ. — Կիւմիւշկիրտանեան էֆէնտի իւր հրաժարման իր պատճառ՝ յստաջ կը բերէ իւր անձնական դրադմունքներն Ուստի կ'առաջարկեմ մերժել զայն , քանի որ ասկից առաջ ուրիշներ ալ մի և նոյն պատճառու հրաժարական տուած և ժողովէն մերժուած է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ժողովցոյ բուէն միայն կրնայ որոշել այն հրաժարապիրն մերժումըն կամ ընդունելութիւնը :

Զայն առելով Ատենապետ էֆէնտի ժողովցոյ բուէին կենթարկէ Կիւմիւշկիրտան Ռուրէն էֆէնտիի հրաժարապիրն որ կը ՄԵՐԺ

7 ի դէմ 13 բուէով և Հետեւարակո ԿՈՐՈՇՈՒԹ հրաժարապիր պաշտօն :

Ազն բուէ արմութեան մէջ ձեռնորահ կը թան 11 Երեսփոխանք :

Ատենապետ էֆէնտի նոյնական ժողովին կը ներկայէ Ա. Դարբէգեանց Մարկոս էֆէնտիի հւետեւալ հրաժարապիրն :

Մեծապատիկ Ատենապետ էֆէնտի  
Հայոց Երեսփոխանական ժողովոյ

Կ. Պօլիս

Սողոգլու ճամբորդութեան պատճառով ձեր առաջ եմ գնում իմ հրաժարականը Ազգ. Երեսփոխանական ժողովէդ. ինդրում եմ բարեհաճիք ընդունիլ այդ :

Մնամ խնարհ ծառայ  
Մարկոս Աղաբեկեանց

31 Օգոստոս 1884

Կ. Պօլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Աղոքէցեան էֆէնտի մեր պատճական պաշտօնակիցներն մին է . ուստի Գիւանս կ'առաջ արիէ մերժել նորահրաժարականն եթէ իւր ճամբարդութիւնն առժամկաց է :

ՄԵՐԵԿՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Կը ճայնակիմք Գիւանին, վասն զի Աղաբէգեանց էֆէնտի այն տեսակ հանգամանքներ կը կրէ յահճմն , որք գնահատելի են :

ԹԱԿՐԵԱՆ Ա. ԷՅ. — Կը ինդրեմք Աղաբէգեանց էֆէնտի յայտնել մեզ թէ իւր ճամբարդութիւնն առժամկաց է թէ ոչ :

**ԱՂԱԲԵԳԵԱՍՑ Մ. ԷՖ.** — Թէ առժամանակեալջ է կամ ոչ, չեմ կորող այդմէն զիտանաւ՝ այդ հանգամանքներից կախում տնի. շատ անգամեղած է որ երկար ժամանակուան համար ճամբարդած եմ և շուտով վերագանգուած, երբեմն էլ շուտով վերագանգուած, համար ճամբարդած եմ, ու երկար մնացել: Երկիրն հանգամանքներն ծանօթ են Ձեզ, ճամբարդութեան մասին հաշիւ չ' կարող լինի, մասնաւոնդ որ ես մէկ հիւանդութիւն ունիմ որ այս օրերս երեան եւած է և չեմ գիտել թէ երբ կը բժշկուի Միայն այս պիտի խնդրեմ Ձեզմէ որ հրաժեշտիս առթիւ երկու խօսք ունիմ ժողովիլ խօսեմք, սրտիս վրոյ է, գորս տամ ու երթամ: Այսօր յատկապէս այդ նպատակով եկայ, կուզէք լսել:

(Ատենապետ էֆէնափի ժողովին կամաց կը զիմէ թէ կո՞ւզէ լսել զԱղոբէգեանց էֆէնափի որ առ այս կը յայտնէ իւր յօժարութիւնն. — Հետեւարար Ատենապետ էֆէնորի կը հրամարէ ղԱտենամասն ՚ի ընմ):

**ԱՂԱԲԵԳԵԱՍՑ Մ. ԷՖ.** — (Բիմն ենելով) Ամենին դիրին բանը որ կայ, խրատ և խորհրդ տան է. իսկ ամենին կժուռար բանն որ կայ, խրատը հասկնալ և խորհուրդն գործադրելն է: Առաջինը պիտի անեմ ես այսոր, իսկ երկրորդն պահանջեմ:

Քանի տարիէ ՚ի վեր է որ երեսփոխան եմ, ամեն ժողովիքի ներկայ գտնուել եմ, բացի մէկ կամ երկու նիստերէ, այն էլ հիւանդութեան պատճառ ու ու Մանաւանդ որ առաջին տարիներին բորբոքութիւնները երբ ժողովքը Պում-Փառու կը դուրս էր, ոտքով կը դնայի մինչեւ այն տեղ:

Արդ, կը տեսնենք որ ՚ի սկզբանէ անտի, մեր Աղջը հետամուտ է մէկ կերպուական Վարժարան համաստել եւ կը յուսայ մեծ լցուափել եւ օգուտ քաղել անկից: Բայց այս ակնկալութիւն մի բացասական բան է ինձ

համար: Ամենին մեծ դպրոցը մէկ ազգի համար՝ ընտանիքն է նախ, երկրորդ՝ Աղջը, եւ երրորդ՝ քաղաքն ուր կապի: Ո՞ր ազգին մէջ որ ընտանիքն էն, ազգային եւ քաղաքական կեանք չկայ, այն տեղ ուսումնարան մէկ օ-դուտ չեն կարող արտադրել: Այժմ մենք մի մեծ ուսումնաբան ունինք, եւ այդ ամենամեծ ուսումնարան՝ որ ազգին պարտաճանաչութիւնը եւ զգացումները վառ կրնայ պահել, այն այս ժողովս է, «րոյ» ՍԶԳԱԸՑԻ ԸՆԴԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, անունն առուել են: Այս այնպիսի մի Ուսումնարան է, որ մեծ է, կենուանի բարբառով եւ ո՛չ դրավ. մէկ ազգի ինչպէս լինելը հասկնալու համար, նորա ժողովն զատելու է եւ այսօր, Տաճկառասնի Հայոց աղոգութիւնը պահպանող տարրն՝ այս ժողովսէ:

Ուստի յատկապէս կը խնդրեմ որ, ինչպէս Աղջային ժողովս հոգ կը տանի իւր Ուսումնարաններու վրայ, նոյնայս հոգ տանի ինք իր վրայ: — Ի՞նչ է սորա միջոցը, եւ ի՞նչպէս անենք որ ազգը մեծ համարութ ունենայ այս ժողովս վրայ եւ ապագային իւր արժանապայէլ զիրքին մէջ մտնէ: Նախ պէտք է որ երեսփոխանը երկայնամիտ լինին եւ ունենան համբերութիւն, անենան աղջային առաքինութիւն եւ մտաւոր զարգացումն: Երկրորդ՝ Աղջային Վարժարանաց մէջ փոխանակ ունակ առաջին լեզուներ եւ դիտութիւններ ուսուցանելու, բոլոր աղդաց Պահմանագրութիւններն սովորեցնել պարտասորիչ ուսում անելու: Ես անմանադրական աղջերի հմտու երեսփոխաններ:

Այս է ահա իմ մեծ խնդիրքս որուն ընդունելութեան կը ցանկամ: Համձիս ապացոյց է մեր եկեղեցական պատմութիւնը, մեր աղջային պատմութիւնն, զորս գիտոցով լաւ կը թափանձէ խօսքերու: Սեր նախնիք ալ փոքրիկ Սահմանադրութիւնը կը կազմէին եւ այդ գրութեամբ կը կառավարուէին: Եթէ

այդ չ'լինէր : այսօր մէկ հայ չ'էր մնացել երկրիս երեսը : Ուստի եւ Սահմանադրութիւնը ափառէ լինի գլխաւոր տարրն՝ մեր ազգի փրկութեան եւ ապադային համար :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Կէցցէք, շնորհակալ եմք :

ԶԱՅԵՐ : — Շա՛տ շնորհակալ եմք :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Էֆ. — Շնորհակալ եմ Ազարէդեան է ֆէնտիի որ արդքան լաւ բացատրութիւններ տուաւ Սահմանադրական դրութեան օգտակարութեան մասին :

ՅԱՄԵՆՈՒՍՈՍ Երեսփոխանք շնորհակալութիւն կը յատանեն Ազարէդեանց է ֆէնտիի որ իւր հրաժենան տալով, կը թողու զրեմն :

ԺՈՂՈՎԸ ԿՈՐՈՇԵԼ իր օրինաւոր բացակայ արձանագրել զայն ի տուարի ներկայութեան :

#### 4.

ՀԱՐԳՈՎԱՆ Կ. ԷՖԵԿՏԻ Սըլվանանի ի մասին Կիլիկիոյ Կարողիկոսական եւ Համեյս ամուսնական խնդրոց .

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Մեր պաշտօնակիցներէն Սըլվանան է ֆէնտիի կողմանէ երկու հարցումներ կան Դիւանիս փայ ուղղեալ առ Վարչութիւն : Ահաւասիկ այդ հարցադրելու :

Կը հարցնեմ Պատ. Վարչութեան, Ա. Թէ ի՞նչ միջոցներ ձեռք առնուած էնուած էն Հաճրին մէջ ի գործ դժուած բոնի ամուսնութեան համար :

Բ. Թէ ի՞նչ վիճակի մէջ կը դըսնուի կիլիկիոյ Կաթողիկոսական խնդիրն :

Աղդային Երեսփոխան  
Կ. Սըլվանան

ԺՈՂՈՎԸ ԿՈՐՈՇԵԼ աղն կրկն հարցագրելուն ՅԱՆԵԼ առ իւր Վարչութիւն ի պատասխանատուութիւն :

#### 5.

ՀԱՐԳՈՎԱՆ Ա. ԷՖԵԿՏԻ ԹԵԿԻԵԱՆԻ լըրագրական նրատարակութեան մը առքին :

ԱՄԵՆԱՎԵՍ է ֆէնտի նոյնպէս ԺՈՂՈՎԸ կը յաղորդէ ԹԵԿԻԵԱՆ Աւետիս է Փ. ի կողմանէ ներկայացեալ հետեւեալ հարցագրին :

ԱՄԵՆԱՎԵՍ Տէ՛ր ԱՄԵՆԱՎԵՍ Աղդ.

ԵՐԵԽՈՒԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ .

Արդե՛օք, ստոյդ է այն լուր, զոր Արեւել լրագիր Օգոստոս 22 ին հրատարակեց թէ «Կրօնական Ժողով» մէջ, Մշյ. Ս. Կարապետ Վանուց Վանահայրական ընտրելեաց համար խօսք բացուած ըլլազով, Ամենապատիւ Խրիմեան սրբազն ուժամբ համբառած չ'է այդ պաշտօնի. և Գեր. Տ. Սըլվանանձեանցի համար ալ ըստուած է թէ Ակնայ Առաջնորդութեան պաշտօն ունի նա »:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ Սըլվազնի, մասին եղած այն լուր՝ թէ եւ երկդիմի հզանի մը ունի, բայց և այնպէս աւելի անարդական կողմի կը հակի. ուստի ծանօթ լինելով Հայոց Աղդին՝ Նորին Բարտ սըրբազնութեան Բարձր ուժամբ, պարտ մը համարեցի ի պատիւ Եկեղեցականութեան խնարհարար խնդրել Պատկի. Կրօնական Ժողովին, որ բարեհաճի պաշտօնապէս բայցատրել իւր որոշումն առաջի Երեխուխանութեան, շատ մը գայթեակեալ միտքեր բուժելու համար :

ԱՂԴԱՅԻՆ ԵՐԵԽՈՒԽԱՆ  
Աւետիս ԹԵԿԻԵԱՆ

31 Օգոստոս 1884  
Կ. Պոլիս

( ՅԵՐ ԱՆԴՐԵՅՆ )

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Այս տեսնէ ժողովդ  
թէ՝ այս հարցման առջի տուած է Ազգային  
թերթի մը կողմանէ տրուած մի պարզ լուրն:  
Այս սակայն հարկ է գլխանալ թէ, լրագրաց  
մէջ եղած հրատարակութիւնք այս ժողովոյս  
մէջ խնդրոյ նիւթ չեն կրնար լինի:

ԹԵԿԻԾԵԱՆ Ա. Էֆ. — Օրինակներն տես-  
նուած են սակայն :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Եթէ կրօնական ժո-  
ղովը Ատենապետ Սրբազնն, որ ասս ներ-  
կայ է, ուղի պատասխանել 'ի դիմաց Վար-  
չութեան, կարծեմք խնդիրն ինքնին կը փակ-  
ուի :

Տ. Խ. ԱՐՔԵՊՈԽԿ. ՆԱՐ-ՊԵՏ — ( Ատե-  
նապետ կրօն. Ժողովոյ ) Խ դիմաց կրօնական  
ժողովոյ կուզամարարել թէ՝ բնաւին այդ  
տեսակ խօսակցութիւն մը տեղի չ' ունեցած  
յատենի կրօնական ժողովոյ, եւ թէ տրուած  
տեղեկութիւնն սխալ է :

ԹԵԿԻԾԵԱՆ Ա. Էֆ. — Շատ լաւ, այս  
յայտարարութիւն բաւ է ինձ համար:

ՄԵԿԻԾԵՄ-ԳՈՒԼԻ Յ. Էֆ. — Շնորհակալ  
ենք կրօնական ժողովոյ Ատենապետ Սրբազ-  
նէն որ հակիրճ բացատրութեամբ մը պարզեց  
խնդիրն եւ հանդարտեցուց մաքերն ։ Բայց  
չ' եմ կրնար ըմբռնել թէ այս տեսակ հարցում  
ներ ի՞նչպէս կրնան գալ Ազգային ժողովոյ  
մէջ եւ պատասխան պահանջուիլ: Խորհրդա-  
րանաց եւ գործադիր Խլանառութեանց յարա-  
բերութիւնք յայտնի են ։ Շատ խօսքեր եւ դի-  
տողութիւններ կրնան անցնիլ Վարչութեանց  
մէջ, զորս Խորհրդարանին մէջ յուղիլ՝ բնա-  
բարում մը կը համարիմ Խորհրդարանական ա-  
զամութեան: Ուստի ես, իբր սկզբունք այն

կարծիքն ունիմ թէ այս տեսակ անտեղի հար-  
ցումներ առանց նկատողութեան իսկ առնելու,  
մերժուին :

ԹԵԿԻԾԵԱՆ Ա. Էֆ. — Երկու ապրիլ ՚ի  
վեր երեսփոխան եմ և պատահած է շտա ան-  
գամ որ երեսփոխանը լրացրական տեղեկու-  
թեանց վրայ յենլով, հարցումներ ըրած եւ  
Վարչութենէն գոհացուցիչ պատասխան ստա-  
ցած են. ի՞նչպէս կը լուսաւ ուրեմն որ այժմ յար-  
դոյ պաշտօնակիցն կենչ անկարեւոր զատել  
իմ սոյն հարցումն եւ մինչեւ իսկ կ'առաջար-  
էն նկատողութեան չ'առնուլ զայն :

ՄԵԿԻԾԵՄ-ԳՈՒԼԻ Յ. Էֆ. — Ատենապետ  
է Փէնտի, խնդրեմ, հասկցուցիք աղնիւ պա-  
տօնակցիս թէ ես իւր հարցմանն համար կար-  
ծիք չ'յայտնեցի, այս իբր սկզբան խնդիր՝ ընդ-  
հանուր կերպով զիտողութիւն ըրի: Մանա-  
ւանդ թէ Թնկրեան է Փէնտիի հարցումն իւր  
պատասխանն ստացաւ կրօն. Ժողովոյ Ատենա-  
պետ Սրբազնի կողմանէ :

Ատենապետ է Փէնտի յայտարարելով թէ  
կրօնական ժողովոյ Ատենապետ Սրբազնի  
կողմանէ այս մասին տրուած բացատրութիւնն  
լսուելէ վերջ, այլ եւս հարկ չ'մնար սոյն հար-  
ցումն յլել առ Վարչութիւն, եւ թէ խնդիրն  
փակուած պէտք է նկատել, կանցնի ատենա-  
պեն միւս թղթոց :

6.

Հարցումն Թնկրեան Աւետիս հենատիի  
՚ի մասին էջմիածնայ Կարողիկոսական  
լսնդրոյ:

Ատենապետ է Փէնտի կը հրաւիրէ զԱտե-  
նադպիր է Փէնտիին ընթեռնուել Թնկրեան էս-  
փէնտիի մի երկրորդ հարցագիրն :

Ասեմափայլ Ատենապետ էֆէնտի  
Ազգային Պատ. ժողովոյ.

Բաւական ժամանակ անցաւ, տակաւին Ազգը ու Երեսփոխանութիւնը չը կրցան իմանալ պաշտօնապէս թէ՝ ի՞նչ եղաւ կաթողիկոսական խնդիր։

Ճշմարտապէս այս խնդիր Հայ լնդհանը բռնը թեան ամենաբարձր խնդիրներուն առաջննն լինելով, բնականաբար մեծ ցաւ պատճառած է և օրէ օր ալ կ'առաւելու։

Ուստի և ես զդալով այս ամենը, իրեւ հարազատ հայ զաւակ և Զերամենայետին մի պաշտօնակիցն լինելով՝ կառաջարկեմ խոնարհաբար Պատակ, երեափոխանական ժողովոյդ, որ միակ աղջի ներկայացուցիչ ու պատասխանատու մարմինն է, հաճի պաշտօնական տեղեկութիւն մը խնդրել հեռազրաւ անմիջակէս որի միջոցաւ որ անկ է, իմանալու համար թէ՝ ի՞նչ եղաւ կաթողիկոսական խնդիր և ի՞նչ պիտի ըլլայ. յառաջիկայ ժողովին պատասխան մը բերելու պայմանաւ։

Ազգային Երեսփոխան  
Անենիս Թնդիեան

34 Օդոսոս 1884  
Կ. Պօլիս

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Այս հարցադիրն Վարչութեան յշելով պատասխանն իրմէ կ'սպասենք : Խնդք կ'առողջական Յանձնական անձնագույն կամ՝ այլմիջոցաւ հարկ եղած տեղեկութիւնն ստանալով բերել ժողովոյս նախադեմ պայմանաժամն մէջ։

Ժողովն համակերպելով Ատենապետ էֆէնտի սոյն յայտարարութեան, ԿՈՐՈՇԵ թշնկեան էֆէնտի սոյն հարցադիրն ՅԴ. Առաջարկարարանի միջեալ պաշտօնեայն Բ. Դրան պայմանական պարգևելուն ի տեղեկադրութիւն :

( Հայոց ազգի )

Հարցագիր Ա. էֆէնտի Յեկեանի Պատրիարքապէնիպաշտօնէից միոյն կողմանէ տէնի ունեցած ինչ ինչ գեղմանց մասին։

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Ֆէկեան էֆէնտի անցեալ նստէն իր բացակայութեան դրոյն հետ հարցադիր մ'ալ յանձնած էր Պիւանիս րայց օրինական ժամէն ուշ հասներուն պատճառաւ լնդթերցումը այս նստին կը մնար: Սա կայս բնագիրն Այս Ատենապետ Եռառութեան էֆէնտիի բով մնացեր է, ուրիշ Պիւանական թղթերու հետ։

Այսժմ Եռառութեան էֆէնտի, իւր հիւանդութիւնն զեկոցանով զրոյն միջոցաւ կը յայտնէ թէ՝ այդ հարցադիրն իւր քով պահած է, դի այդ մասին ինքն եւս օրինական դիտողութիւն ունենալով, կուզէ իւր ներկայութեան վրապահել խնդիրն : Բայց հարցման տէքն, Ֆէկեան էֆէնտի, որ ներկայ է այսօր, իւր յիշեալ գրոյն մի օրինակն այժմ Պիւանիս յանձնած է որ ահաւասիկ : Եթէ ժողովու ուզէ, պատրաստ եմ ընթեռնուու զայն։

ԶԱՆԱԶԱՆ ՆՍՏԱՐԱՎԵՆԵՐԸ — Այս, կուզնք լսել :

Ասեմաշուր Ատենապետ էֆէնտի  
Ազգ. Պատակ ժողովոյ .

Ա. Ստոյդ է՞ որ, մեր Ազգ. Պատրիարքարանի պաշտօնէից մին հակառակ իւր պաշտօնական պարտաւորութեան, Տաճկաց տարեկան 2 պայրամին Ազգային կեդր. մնտուկէն երեսնական, այնէ 60 օսմաննեան լիրայ առած, այլ սակայն իրը պայրամական պարգեւ. Բ. Դրան պաշտօնէից բնաւին վճարք մը ըրած չէ եղեր. Բ. Ստոյդ է՞ որ, Պատրիարքարանի յիշեալ պաշտօնեայն Բ. Դրան օրունիկ,

Քէլքէնի իրը վարձ Պատրիարքարանէն իւրաքանչիւր ամսոյ համար 400 դրշ. գումար մը ստացեր. և առ այն եւս ո՛կ վճար մը ըրած չէ եղեր.

Գ. Սաոյդ է՞ որ, Վարչութեան Պատրիարքանէն մին յիշեալ պաշտօնէն նոյն արարքն լսելով խնդիրն անձամբ քննած, և արարքն ստուգած, և սակայն առ այն որ և է տնօրինութիւն մը տեղի չէ ունեցած.

Դ. Սաոյդ է՞ որ, Պատրիարքարանի և Բ. Դրան միջեւ յարաբերելի զըթէ բոլոր գործադրութիւնը Պատրիարքարանի մի այլ յաջողակ պաշտօնէի ձեռօքն կը լինին, և յիշեալ պաշտօնեայն առանց իւր պարտաւորութիւնը կարենալ կատարելու մի միայն իրը շնորհ լաւագոյն ամսաթոշակ մը կը փայերէ.

Ե. Վերջապէս ստոյդ է՞ որ, Ցնտեսական Պատրիարքութեան եւս փորձով գիտնալով յիշեալ պաշտօնէնին իւր պաշտօնին անբաւականութիւնը, և միանդամայն լսելով նորա յիշեալ ոչ—պատուաւոր արարքն, ուղերէ տնօրինութիւն մի ընել, հաւանականաբար գժուարութեանց պատահեր է.

Ազգային երեսիփան  
Միմօն Ֆելիկեան

31 Օգոստոս 1884

Կալաթա

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Այս հարցումն առ Վարչութեան կը վերաբերի, հետեւարար հարկ է յղեւ առ այն ՚ի քննութիւն եւ ՚ի տեղեկութիւն :

ԳԱՐԱԳԱԾԵԱՆ Ն. Էֆ. — Կերեւիթէ այս իմարդոյն մասին Քաղ. Փողովոյ եւ Ցնտեսարկութիւն միջեւ կարծեաց անհամաձայնութիւն

կայ: Ուստի ես կ'առաջարկեմ Ցնտեսական Խորհրդայն յղեւ զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. Այդ տեսակ առաջարկութիւն մը բնաւ օրինական չէ, Պարագալաւ եան է փենտի: Ուտք է սա կէտն լաւ դիտալ թէ՝ Ազգային ժողովս մի միայն Քաղ. եւ Կրօնական ժողովները կը ճանչէն, Վարչութիւն անուամբ եւ նոցա կը յշէ ու եւ է խնդիր:

ԶԱՆԱԶԱՆ ՇՍՏԱՐԱՎԵՆԵՐՔ — Այս, այս, յղում:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. Էֆ. — Ես այնպէս կը կարծեմ թէ Աանադպիր է փէնտիի կորանին եղած յայտարարութեան վրայ, այդ հարցագիրն ըստ օրինի հուներկայացուած չ'կրնար համարուի եւ թէ հարկ է սպասել Ա. Ատենապետի ներկայութեան:

Ատենապետ է փենտի առ այս ժողովոյն կամացը կը գիւէ, որ ԿՈՐՈՒՆ Ֆէլէկեան Ա. է փենտիի կողմանէն ներկայացեալ հարցագիրն ՅԴ. Ել. Վարչութեան ՚ի պատասխանատուութիւն:

### ՄԻԶԱԴԻՊ

ԶԵՐԱԶ. Մ. Էֆ. — Այս օրուան Օրակարգին մէջ Պէկեան է փէնտիի լինդիրն նշանակուած է, որոյ արդար լուծման փափաքողներէն մին ալ ես եմ: Բայց այդ խնդիրն Օրակարգի մէջ անցնեն կը նշանակէ թէ՝ Օրակարգն սպասուած լինելով, և ննդրոց կարգն ձեռք առնուերէ: Բայց ես կը յիշեմ որ Պէկեան է փէնտիի խնդրէն առաջ Վարչութեան մէկ տեղեկագիրն կայ ԵՀՄիածնայ անցից մասին, ՚ի պատասխանի Թիւրիէնտնեան է փէնտիի մէկ հարցման: Խնչուարդենք այդ իրնդրին ըստ օրինի վերադասուած չէ:

ՓԱՓԱԶԵԱՆ ԵՅ. — Ես կը կարծեմ  
թէ ըստ որում հրատարակուած էլ այս նատի  
ատենագրութիւնն յօրում այդ հարցման պա-  
տասխանը ինդրոց կարգն անցնել որոշուեցաւ,  
այդ պատճառու յետաձգուած է նաեւ իրեն-  
դիւն ալ :

ԳՈՒՐԳԻՆ Յ. ԵՅ. — Ես ալ խօսք կու-  
ղեմ անցեալ չըջանի ատենագրութեանց զրայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Խնդրեմ որ այդ տե-  
սակ գիտուութիւններ վերապահելով Ա. Ա-  
տենապետ է ֆէնտիի ներկայութեան, այժմ  
անցնիմք մեր Օրակարգի Բ. խնդրոյն, որի՝  
« Եարունակութիւնն վիճաբանութեան ՚ի վերայ  
Առաջնորդական խնդրոյն » :

Զայս առելով, Ատենապետ է ֆէնտի  
կանցնի Օրակարգի երկորդ խնդրոյն :

### Բ.

Զարունակութիւն վիճաբանուրեան ՚ի վե-  
րայ Առաջնորդական խնդրոյն

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Առաջնորդական խնդրոյն վրայ անցեալ նատէն թէեւ առաջին իտուրը Եէլիքեան էֆէնտիին է, բայց շերազ  
էֆէնտի, իրեւ Տեղէկարեր նախաձեռնու-  
թեան Դիւանի, խօսք ուզած մնելով, ըստ  
որինի նախ անոր կը արուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Որպէս յայտնի է,  
Օրակարգի սոյն խնդրին ծագումն առած է առ-  
կից յառաջ Աէֆէրեան Արմէծն Արբազոնի կող-  
մանէ 1884 Քետրլար 22 թուականա, ժողո-  
վաց անցեալ շըշնի և որ նատին ննդիրայց-  
եալ ՚ի հարցագրէն որ յըուեցաւ առ Նախա-  
ձեռնասթեան Դիւանն ՚ի բննութիւն և ՚ի առ-  
զեկագրութիւն :

Նախաձեռնութեան Դիւանն խնդրին բե-  
